նառէր յաթոռ սրբոյն Գրիգորի¹ Լուսաւորչին — զամս չորեք Ժ. և Խ. ի Ժամանակս ԻԵ. կաթողիկոսի մինչև ցտէր Արրահամ Հայոց կաթողիկոս:

Աւաղ ասլա աստանօր յիշատակիս քանզի ի սորին Ժամանակս ի բաց կացին Վիրք ի միարանութենէ Հայոց և կուրացան: շտացան կորովիք² ի պատուիրանէն և թիկունս³ դարձուցեալ ապարանեցին հօրն հաւատոյ: Եւ ընտրեցան որպէս տպերախոք և անհնազանդք և հաճեցան լինել կցորդ Քաղկեդոնի փոխեալ զսահման հարցն: Թողեալ զուսուսման մանկութեան և մոռացեալ զուխան աստուածեղէն: ⁴

Եւ ի ԺԹ. ամին Արրահամու կաթողիկոսի զտէր Թահան ի Գողայովտէ Մօրիկ կայսրը Հռոմայեցոց⁵ կացուցանէ կաթողիկոս Հայոց [Բ 126]) ի բաժնին Եռնական կողմանն ի Ժամանակս Արրահամու:

Իսկ Նիւրիոն⁶ Վրաց արքեպիսկոպոսն յազապս դոյլն պատճառի՝ աղաքաւ⁷ փառամուրթեան բաժանեալ ի Հայոց՝ խոստովանէր զաղանդն Քաղկեդոնի: Որ բազում անգամ զրեաց առ նա տէր Արրահամ Հայոց կաթողիկոսն՝ դառնալ նմա ի մոլար ճանապարհէն և ոչ կամեցաւ զի յոյժ ներկեալ էր աղանդովն⁸ Քաղկեդոնի:

Եւ յերկփեղկիկ Հայրապետութեանն Հայոց վաղձանէր մետրապօլիտն⁹ Աղուանից: ձեռնադրեալն յԱրրահամայ Հայոց կաթողիկոսէ:

Իսկ տանն Աղուանից նշկահեալ զանմիաբանութիւնն Հայոց՝ նախանձեալ ընդ Նիւրիոն¹⁰ և ինքեանք ձեռնադրեցին ինքեանց կաթողիկոս և շաղեցան սուղ ինչ Ժամանակս՝ զամս ԻԴ. մինչև ի վաղձանիլն¹¹ տեսաւն Արրահամու և տեսաւն Եովհաննայ երկուս¹² միայն

լեալ ի տանն Աղուանից [Ա 204a] անձամբ կաթողիկոս:

Եւ յետ մահուանն¹ Հայոց հայրապետացն՝ յաջորդէ զաթոռ սրբոյն Գրիգորի տէր Կոմիտաս յԱրաքածոտանէ.² և սա միապետեաց զբաժանեալ հայրապետութիւն տանս Հայոց: Սա շինեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմէի:³ Սա էր առաքինաջան վարուց յաւէտ հեռեղ⁴ և յոյժ ահա հաստուածային զրոյ: Եւ աղաչէր զաստուած զօրհանապաղ ի առէ և ի զիշերի միաբանել զանդամն որոշեալ [Ի] սուրբ հայրենի զրկացն սրբոյ Լուսաւորչէն, որ էառ իսկ զպտուղ աղօթիցն:

Քանզի ի սորին երրորդ ամի աթոռակալութեանն վաղձանէր ապստամբ հայրապետն Աղուանից և՛ զոյ ասել՝ թէ չողոյն շնորհ իրր ի թանձրամած թմբից⁵ ցքոյ զարթուցեալ զմիտս իշխ[Բ]անացն՝ ծանեան զինքեանց զփրկութիւնն և դարձեալ հաւանեալ խնդրեցին ինքեանց կաթողիկոս ի ձեռնադրութենէ սրբոյ Լուսաւորչին աթոռակալէ՝ ի սրբոյն Կոմիտասայ:

Իսկ նա իրրե հայր բաղմաբութ ոչ պահէր ռիս և ոչ ցանդ բարկանայր, այլ վաղվաղակի ձեռնադրէր և միապետէր և յորդորէր վարդապետական բանիւք և հաստատէր ի միաբանութիւն: Եւ եկաց տեւաց⁶ այսպէս ուղղափառ և սուրբ կարգադրութեամբ զամս ԺԲ. և զԺամանակս Ժ. աթոռակալաց սրբոյ Լուսաւորչին՝ մինչև ցտէր Եղիա Հայոց կաթողիկոս, որ էր ԼԴ. երրորդ ի սրբոյն⁷ Գրիգորի:

Ապա աստանօր սկզբնաշարն աստանայ, որ ի ձեռն կնոջն գաղտնապատիր և սուտակասպաս խաբկանօք զիրանալիրն⁸ կազմած ընդվիկեալ փաղաքշալուր աստուածայոյն կարծեօք՝ զնախադոյն բաղդատական տարամերժեալ պատիւ՝ զ-Եմա տիրեսցէ՝ն⁹ քեզ՝ վճռա-

1. Բ շուքի „գրիգորի“

2. ԱԲ պապէս. 2Է արքեւօք յատուկ անուն՝ Կորազնիք:

3. Ա Ի Թիկունս

4. Ա Ասակ. Բ. 17.

5. Բ հռոմայեցոց

6. Ա Կիւրոն

7. ԱԲ „ազգէ“ կամ „աղգէ“

8. ԱԲ յաղանդովն

9. ԱԲ նետրապօլիտն

10. Ա Կիւրոն

11. Ա Ի վաղձանիլ

12. ԱԲ քու

1. Բ մահունն Ա մահուն

2. Ա յարաքածոտանէ

3. հրիփսիմէի

4. հետեւեղ

5. Ա Թմբից

6. Ա տեւեալ

7. Ա Եւ ի սրբոյն Բ Եւ որդի սրբոյն

8. ԱԲ պապէս

9. ԱԲ պատիւ զնա տիրեսցեն

ւորեացի վաթժարակի առեալ զատումն երկ-
րաւոր Նշովակն ի քոյդ սղալանս անհեշ-
տաբար զնա ըմբոյշինեացես՝ մինչև ի կատար
խոցումունք վիրաւորէք ընծիւղեացին քեզ՝
փոխանակ եռանգաւ [Ա]սեռն երկինեացիկ
ընդծաղկաւ ապաւում թեանց՝ արքայականացն
կայենիցն՝² փափկութեանց՝ յերկա տաժան-
մանց կրիցես՝ զտուգանս զսգուողանացդ՝
զանանաձարակն հարկեացիս պարենաւորիլ
հանդերձանս զիւրթառամն և վաղաճումն-
որս մինչև ի ծոցաւորիլն քո անդէն։ Եւ
ստեղծեալք ի ստեղծողէն ընկալցիս զ[Ը]մ-
բռնմանն աղետս՝ նոյն թիւնարերան իժից
խղիւղթք։ [A 127a]

Եւ աստանօր՝ ի վաղճանել հայրապետին
Աղուանից՝ շնչեաց ի տիկին մի Աղուանից աշ-
խարհին և իրրե ի դիւական հոգւոյն բա-
խեաց զոյասել՝* սիրեաց զամն [յ]եպիսկոպո-
սաց աշխարհին Աղուանից և անձնիշխան՝
կամօք՝ զունակ նախամօրն՝ սիրեաց ելանել
ի գրախտէն և յաստուածատեղծ կայենից։
Նոյնպէս և կինս այս քակեաց զխրամ սրբոյ
Հուսաւորչին որ էր առեալ ամն ՆԶԴ՝ միով
միակամութեամբ՝ ըստ կարգեցելոյ սրբոյն
Գրիգորի տալ ի նորին աթոռոյ զձեռնադրու-
թիւն ասնն Աղուանից։ Եւ առեալ զայրն
զայն՝ զոր վերագոյնդ ասացաք զԲաղուր
տայր հրաման եպիսկոպոսաց զնա ձեռնադրել
կաթողիկոսս առանց սրբոյն Գրիգորի աթո-
ռակալին ձեռնադրութեան։

Ապա յետ այսր եղելոյ՝ ջահեցաւ այրն
այն Բաղուր որ եղև զկաթողիկոսս ներկեալ
յաղանդն Երեստորի՝³ Բաղկեղանի և առ սա-
կաւ սակաւ սարգեալ եմոյժ յեկեղեցիս զառ-
մայն շէնիի և հերձ զսուրբ հաւատս։ Եւ
բաղումք ըմեցան ի սուրբ ուխտէն՝⁴ ի
տունմարն շէնիի։ Եւ իրրե գիտացին որք ուղ-
ղափառք էին և անխառն մնացեալք ի քող-
կեղանականացն՝ զաղաղակ բարձին առ սուրբ

Հուսաւորչի աթոռակալն՝ առ տէր Եղիա հա-
յոց կաթողիկոսն։

Իսկ ապա սուրբն այն և անօթն աս-
տուծոյ շարժեալ ի հոգւոյն սրբոյ՝ արիարար
ժողովեալ զուղղափառ եպիսկոպոսունս և
զհարս Հայոց աշխարհին՝ զնայր ի շահաստանն
Պարտաւոյ։ Եւ անդ ժողով արարեալ՝ զիշխանն
Աղուանից աշխարհին և [Ա204b] զեպիսկո-
պոսունս և զսուրբ կրօնաւորս որք ոչ էին եր-
կրպագեալ [Բ] պիղծ աղանդոյն Բաղկեղանի՝
կամօք և հաւանութեամբ նոցին և իսմայէլա-
կան բռնութեամբն կալեալ զԲաղուր և զտի-
կին նորին ձեռնադրող կապեալ յիշոյ և ձա-
ղածանակ առնէր անդրադարձ հետեանօք ընդ
շահաստանն Պարտաւոյ։ Եւ ինքն ձեռնադր-
էր նոցա հայրապետ և առնոյր գիր նշովից՝
մի ևս շեղիլ՝ ի սրբոյն Գրիգորէ և մի՝ զոք
ընդունել կաթողիկոսս որ յեպիսկոպոսաց լի-
նէր ձեռնադրածս բայց միայն որ ի սուրբ
Հուսաւորչի աթոռակալէն ձեռնադրէր։ Եւ
ինքն դառնայր յաշխարհս իւր։

Եւ եկաց առեաց այսպէս միով հաւա-
նութեամբ զամն ժԼԻ՝ զժամանակս ժԴԻ
հայրապետի՝ մինչև ցաւէր Գէորգ Հայոց կա-
թողիկոս։

Իսկ ապա՝ զօրացեալ բռնութեանն իս-
մայէլացոց՝ գերեցին զսուրբ կաթողիկոսն
Հայոց։

Իսկ ապա՝ զբան եպիսկոպոս զոլով նորին
Թունան անուն՝² փախեաւ ապստամբողական
կարգաւ անկաւ յաշխարհն Աղուանից։ Ոչ
զոյր հայրապետ Հայոց որ յուսանէին ըստ
սովորութեան՝ առնուլ ձեռնադրութիւն։
Իրրե մեծահաւատութիւն իւրեանց համա-
րեալ՝ զչիք՝³ զգրան եպիսկոպոս հայրապետին
Հայոց՝ ժողովեալ զեպիսկոպոսունս աշխարհին
Աղուանից՝ կարգեցին զնա ինքեանց կաթողի-
կոս։ Եւ իրրե շնորհեաց գերեզարձ Զրիստոս
հայրապետին Հայոց տեսուն Գէորգեայ՝⁴ ի ձեռն
զանձագնութեան տեսուն Համամայ Աղուա-
նից արքային՝ իսկ հայրապետն Աղուանից
Թունան կոչեցեալն ընդառաջ եղև տեսուն

1. Ա ը ծաղկաւապտուեց, Բ ը ծաղկաւաց

2. Ա կայնից

3. Ա կերքես Բ կրքես

4. Ա անծն իշխան

5. Ա նստորի

6. Ա ուխտն

* Համար զերեւում տառք՝ « ի համագոյէն Հոգ-
ւոյ բախից գոյ ասելս »

1. Ա Բ շաղիւ՛, մինք կարողում ենք շեղիլ

2. Ա նորի յունան անուն Բ նորին յունանուն

3. Ա եւ յշիք Բ յշիք

4. Ա գէորգայ, Բ գէորգեայ

Գեորգայ սիրայիր¹ սրտիւ զերախտիսն յիշիլ տեսան Համամայ առ զերեւելիս թեանն² օծանս [Բ 127b] զոր տեսեալ Հայոց հայրապետին տեսան Գեորգայ զեղեալսն զարմացաւ։ Եւ նոյն ժամայն հրաման տայր կողոպտել զկարծեալ կրօնիցն։

Իսկ աստանօր յուշ արարեալ տեսան Համամայ զերախտիսն³ [Ա] համարեալ ապերախտ⁴ և զպատճառն շնորհակալեացն օծմանն⁵ անշնորհութեանն զայրանայր։ Եւ զպլիսս առաջի և զեալ հայրապետին Հայոց աղաչէր զԹուաննն, որ առանց նորին կամացն էր, նորին հրամանաւ վերստին ձեռնադրել⁶ և խողով⁷ (?)։

Իսկ նա առ հարկի⁸ իրրեւ մեծ իմն երախտիս համարեալ⁹ կրկին զԹուաննն ձեռնադրէր և տուեալ նոցա զայր յաշխարհ իւր։ Եւ էր զործն արտաքոյ սուրբ զրոյց, այլ սակայն կարիս վախկոտութեանն զայս առնել հաւանեցոյց։ Եւ ինքն դառնայր զայր հասաներ յաշխարհս իւր։

Եւ յետ վաղձանելոյ հայրապետին Հայոց տեսան Գեորգայ սովորութիւն կալաւ և զիւրադարձ զեղեալսն¹⁰ իրրեւ վաղձանէր Թուաննն¹¹ ձեռնադրէին նոյն սովորութեամբ զհարազատ նորին զոմն Սիմէոն, և ի նմանէ Դաւիթ, և ի նմանէ Սահակ, և ի նմանէ Գալիկին, առ որ¹² այժմ բանս է, տեսեալ ապստամբութեամբ զամս Կթ¹³ և զժամանակս հայրապետաց հնգից¹⁴ մինչև ի մեր նուաստութիւնս։

Եւ զայսոսիկ ճշդիւ¹⁵ և հաւաստի քննողութեամբ տեղեկացեալ ուրախ լինեալ, և յանձն արարեալ Հոգւոյն ձրից զառ յապտ լեպսն¹⁶ դառնայաք յաշխարհն Սիսական ի ինդիր ամբարիշտ և ազմկատէրն Թակովրայ¹⁷ [Բ] թրեւս հնար լիցի գտանել զանգիւտն զխաւարատէրն, զազմկայորդորն, զխազմնահարուստըն։ Իսկ նա զերկաժող և զխաւարաբորն հուր թագուցեալ ի սրտին զործարանի¹⁸ իրրեւ լսէր զմուսն մեր յաշխարհս Սիսական, նոյն ժամայն զփախուստ¹⁹ ողջունէր, և հասեալ

անկանէր յանուանեալ իշխանն Զուանշիր, տմբանալով յամուրս նորին Կապան կոչեցեալ, անհայելի տմենեցուն մերձեցալոյ։ Զաւուրս բազումս այսպէս որջանայր և մեր տարակուսեալք, Լքեալ և անյոյս եղեալ ի կենաց թշուառացելոյն Թակովրայ²⁰ թէպէտ և բազում անգամ աղաչեաք զիշխանն Զուանշիր տալ ի բաց զաւանդն աստուծոյ, սակայն ոչ կամեցաւ։ Ետապա որոյ առ հարկի զիմադարձութեանց նորա հարկեաք զհրեղէն [Ա 205a] սուրն արձակել ի վերայ նորա և նղովիւք կապեալ զնա դառնացաք²¹ մեծաւ օգով և անմխիթարութեամբ, ի տէր ընկենլով զհոգս մեր, զի նա հոգացեւ վասն մեր։ Եւ զնացեալ անտի, հապիճեալ տաղնապով յաւուրս ձմերայնոյ, յոյժ տառապանօք և սաստիկ նեղութեամբ²² եկեալ հասաք երկվարօք, այլ արշաւանօք, յաշխարհքս մեր Ծիրակ կոչեցեալ ի հանգիստումս բարերջանիկ և վեհի մեծի արքային Արասայ Հայոց թագաւորին և Աշոտի իշխանաց իշխանի նորին որդւոյ։²³

Եւ պատմեալ սոցա զանցս աղետից ուղոյն ձանապարհի և զդերեւ մնալ ի փրկութենէ կորուսելոյն Թակովրայ²⁴ զարմացան յոյժ և քաջալերէին²⁵ զմեզ մի ևս վհատիլ [Բ 128a] ի նոցին փրկութենէ, այլ խորաքննին զխտութեամբ որսալ։

Եւ սկսեալ յայսմհետէ և յապա բազում ջանիւք և անբաւ թղթագնացութեամբ²⁶ հրնարեաք և զօրհանապաղ զարտօսարթոյր վրտակս և զաղերսպի հառաչանս ի ժամ պատարազին առաջի զենոյն Զրիստոսի հեղուր։

Եւ լինէր այս ի թուականութեանն հայոց ԹՂԸ տառապանաց մերոց։ Եւ ապա զանհնարին²⁷ բաժակ մահու արբոյց մեզ Զըրիստոս, քանզի հասեալ յամն երեքտասաներորդ²⁸ մերոյ նուաստ աթոռակալութեանս²⁹ երարձ ապա Զրիստոս զպսակն օճոյ մերոյ, զարի և զզօրեղն, զսկայազօրն և զհեղն Արաս Հայոց թագաւոր, թոռն Աշոտոյ Բագրատուն-

1. ԱՐ սիրով իր

2. Ա գերեւ փրկանս Բ գերեւ փրկանս

3. ԱՐ ծեռնադրեալ

4. ԱՐ ապալէս աղճատ

5. ԱՐ որ առ այժմ բանս է

6. Բ հնգից

7. Ա ճշդիւ 8. Ա զփախուստ

1. Բ. անդի

2. Բ որդոյ

3. Բ քաջալերէին

4. Բ ի խտագնացութեամբ

5. Բ զանհնարին

6. Ա գտանել Բ գտանել

* կաղող է լինել նա զառնայաք

ւոյ¹ Հայոց թագաւորի: Եւ յաջորդէ զաթոռ թագաւորութեանն նորին որդի տէր Աշոտ, Հայոց իշխանաց իշխան, հանձարեղ և իմաստուն, այլ զեղեցկատեսիլ կրօնաւորասէր և ուղղադատ, ահարկու աւազակաց և չարագործաց, և սիրիչ սրբոյ, և թագ պարճանաց սրբոյ Լուսաւորչի աթոռոյս: Մանաւանդ՝ զոյ ասել՝ թէ ի վեհ շառաւիղէ զարմանալի պտուղ, և հօր սքանչելոյ որդի զարմանալի** պարարեալ մօռք յաստուածային տառիցն համօրէն մարմնովն ամենեկն վայելուչ և կրկին [Ա] խաղաղասէր: Վասն զի շարժեաց, սանձեաց, նահանջեաց զարտաքին թշնամիս յիւրաքանչիւր կարգի: Եւ ի խաղաղութեան ստուծոյ* սկսաք աշխատասէր կամօք երանել ի խնդիր կորուսեալ ոչխարին, ուսեալք յընտանի բնութենէ, թէ վաստակ մտաց ունի զարմատ բանի, և աշխատութիւնն² է զիւտիցն խնդիր: Տինայ՝ աւանիկ [Բ] թէ՛ և զմրտաւ ածեալ զահարկանելի ձայնն [գ]երբնական³ թէ ծառայ վատ, քեզ պարտ էր արկանել զստերն իմ ի արապիղիտս*** և ես եկեալ տոկոսեօք պահանջէի զիմն: Ներկուցեալ և ի զիշերասէր գայլոյն օձտողէ, թէ մի՛ արդեօք ծուլացեալ մոռացեալ լիցիմ զերախտիս հրաշագործողին, որ անձամբ եկն ի խնդիր կորուսեալ ոչխարին, և ապա անկանիցիմ ի ձեռս տանջանաւոր հրեշտակի, և անկցիմ՝ յերանել ի բանալն⁴ և կամ ընդ մէջ կտրիլ⁵ և բաժին ընդ հեղափարակ և ճշդադատ ծառային լիցի: Մանաւանդ զի որք երկասիրաբար և յոքնաջանիւք ախորժեն արդիւնաւորելի այսպիսիքն քոտակապէս տաժանողացն հանդոյն, որք փարթամանալ կամելով խուզեն զթանձրահող և զխճալի⁷ ամաւիայս, որ ունին զոսկէհատացն զգժուարագիւտ խնդիրս, որով ոսկէգործացն վարժին⁸ մանկուհիք: Այսր գունի

զապափարաւ և մերս արպութիւնս¹ ոչ կամեցաւ յանոճ² աճումն անբաւութեան զառաջի արկեալսն սիրոյ գործ հոգեւոր յանկնչ կատարունակութեան՝ զապացութիւնս⁵ Լքանել թողուլ զօրէն չարասացիւր⁴ ներհակաց, այլ յաւետաւոր աշխատեալք ի տուէ և ի զիշերի հայցեալ յաստուծոյ: Եւ սկսաւ լինել ի թուականութեանն, որ էր շրջանս Հայոց • ՅՂԱ. յերկարեալ աշխատութեան մերում մինչև յամն • ՆՂ • լինել⁵ թուականին:

Աստանօր ապա վերափոխի յաշխարհէս մեծըն այն և արի արքայն, որդի տեսուն Գագիայ [Ա 205b] Արծրունւոյ,⁶ Գրիգոր Դերեկիկ⁷ կոչեցեալ, [Բ 128b] և յաջորդէ զաթոռ թագաւորութեանն տէր Համազասպ եղբայր նորին*:

Եւ ի սմին յայսմ⁸ ամի զրաւ արար տէր երկոցունց ներհակացն, զի բարձաւ կրճիմն, որ կայր ի տանն Աղուանից⁹ և ի տան Սիսական, և մեռաւ Գագիկն՝ կարծեալ կաթողիկոսն և ապարասանն Եակովբ, ժամանեալ ի հատուցումն արդարադատին Եիսուսի յաշխարհաժողովն խմբարանն: Եւ այսպէս ապա ամենայն եղծուամն և ապականութիւն քայքայեցաւ և առաքինութիւն և շինութիւն և խաղաղութիւն գտեղի փոխաբերեաց: Եւ առջորաշունչ հողմն հարաւային¹⁰ ի բարեխառն և ի սնուցանող¹¹ օդ հիւսիսային շրջեցաւ: Եւ զբարս քաղցունս տէր տնկեաց ի սիրտս իշխանացն: Եւ զիտեալ մեր զժամանակ ընդունելի՝ ի ժամանակս ձմեռնային և ի ժամս դանաշունչ՝ զարձեալ ձերական տկարութեամբ ժամանեալ յաշխարհն Սիսական, հապ ի ձեպ տաղնապաւ շինել զտեղի կորուսելոյ ազմկասիրին Եակովբայ, զարհուրեալ թէ մի՛ արդեօք զարան ինչ գործիցի ի սուրբ հաւատ սրբոյ Լուսաւորչին ի ձեռն չարասացիւր և

1. Բ քաղաւորունոյ * Ա „այ Բ սց“=սոցա
2. Ա աշխատի
3. Ա Բ տիմանայ, աւանիկ թէ եւ զմտաւ ածեալ զահարկանելի ծայնն, նոր բանն.
4. Ա Մատթ. ԻԵ, 26.
5. Բ ի բանն
6. Բ „կտրել“ Ա Ղուկ. ԺԲ, 46.
7. Ա զխոջալի * ՏԵՍ Խորեն. Բ. 3.
8. Ա վարժեն *** Ոսկ. Մտթ. տես Էջկ. ԲԱ.

4. Ա մեր ստրպութիւնս
2. Ա յանաճ
5. Ա Եան ինչ կատար ունակութեան զապացութիւնս
4. Ա զքաղաղիւր 5. Ա լինիլ
6. Ա արծրունոյ 7. Ա Գերեկիկ
8. Ա այսմ
9. Ա շունի „աղուանից“
10. Բ հարաժ՝ յին
11. Ա ի սնուցանող
* Որ եւ Աբուսահլ, տես Մատեն. հարեկ. եր. 367 Վենետ. 1840.

մարձահոտ հնարից զիւադատին¹ Յակովբայ: Եւ զնացեալ հասաք յաշխարհն Սիսական՝ յանուանեալն Բազայ եւ մտաք ի նախասցեալն Կապան՝ յամուսն ջուանշիրի² Բաղայք բռնակալիւ Որոյ եկեալ հանդերձ տամբ եւ զարմիւք՝ աղիողորմ զթովք եւ խանթակաթ արտասուօք եւ ուղիղ դարձիւ: սրտալիր մեղայիւ՝ առաջի անկանէր եւ ասէր. [Բ] Մեղայ յերկինս եւ առաջի քո՝ բարեխօսութեամբ սրոյ Լուսաւորչին քաղցրացին կամք քո ի վերայ իմ՝ դատողիս առ քո Սրբոյ թիւնդ: որպէս երբեմն կամք նորին առ Տրդատ՝ նորին դատող: Եւ ոչ կամելով զերկարելն, եւ մանաւանդ տեսեալ զեղջ արտասուացն՝ օրհնէաք ապա զինքն եւ զտուն իւր, եւ ձեռնադրէաք եպիսկոպոս [Ա] աշխարհին զորդի նորին զխաչակրօն եւ զսրբանունդ տէր Վահան: Եւ դառնայք մեծապարզ եւ աւետօք: առեալ ի նրմանէ ձեռնադիր պատճենի՝³ մի՝ եւս այլ⁴ լինել զունակ ասացեալ չարասողիւր եւ ապրստամբամիտ խաբողն Յակովբայ, ծանր եւ նղովախառն շարաբանութեամբ, որ ունէր օրինակ զայս:

* * * ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԹՅՈՅ, այս* ձեռագիր է իմ՝ Վահանայ, ջուանշիր իշխանաց իշխանի որդւոյ, առ⁵ աստուածապատիւ եւ հոգեւոր տէր Անանիայ Հայոց Կաթողիկոս: Որովհետեւ չարարին ի կամբս, եւ բարի սրտիւ եւ քաղցր աչօք նախեցան յիս, արժանի համարելով իւրեանց ծառայութեան եւ սուրբ կարգիս խաչակրութեան, եւ Սիսական տանս վերակացութեան՝ երկոտասն⁶ զաւատիս, որում չէ յիս նման ըստ իմ խակ եւ անլիութեան հասակիս, եւ չէ իս կամակից:⁷

Արդ՝ ըստ այդ բարեխոս մտացդ եւ արարածիս զինչ կա[յ] փախարէնս հատուցանել, այլ անձն իմ եղիցի ծառայ եւ հոգի իմ պաշտօնեայ սուրբ Լուսաւորչի

աթոռոյդ: Եւ զայս ասեմ ես թէ շիք իմ եւ որ հետ¹ իմ գալոց են, ի ձէնջ մեծարանաց խնդիրս, ոչ խաչ, ոչ² զաւագան, ոչ բաղմական եւ ոչ այլ բարձրութիւն ինչ, բայց միայն որ [Բ 129a] զինչ ձեր աստուածաբար կամեղ կամի եւ տայք՝ այն է իմ փառք եւ մեծութիւն: Եւ որպէս ձեռնադրութեանս տէր էք եւ տուիչ, նոյնպէս եւ պատուադրութեան, ըստ որում արժանին համարիք: Եւ զայս³ այս հակառակութեանս, որ եղև ի տանս Սիւնեաց, եւ ձեռնարկեաց Յակովբ յԱղուանից կաթողիկոս ապստամբութեամբ, եւ օտարացաւ ի սուրբ Լուսաւորչի աթոռոյդ, եւ ել արտաքս ի հայրական ի զրբկացդ, որում ինքն տացէ աստուծոյ պատասխանի:

Արդ՝ առ ի յինէն, եւ որ զկնի իմ գան յայս⁴ աթոռս, այս հաստատութեան եղիցի կանոն եւ կտակ, որ թէ ես՝ Վահան որդի ջուանշիր իշխանաց իշխանի եւ Սիւնեաց եպիսկոպոս, եւ ո՛վ որ է եւ իցէ յայս աթոռս՝ [Ա 206a] որ զկնի իմ գան, եւ յայսպիսի ապստամբութիւն մըտարերէ, կամ⁵ յԱղուանից կաթողիկոսէ եւլ ըբրել մերոյս⁶ կամ ապրստամբութեամբ կալ ի նմանէ բարձրավրութեամբ, որպէս թէ մարմնական իշխանութեամբ վարել, եւ կամ բռնութեամբ ունել զեկեղեցի աստուծոյ, կամ այլ ինչ թիրութիւն առնել ի հաւատ սուրբ Լուսաւորչին եւ լուծանել զկանոնս առաքելականս, եւ ապստամբեցուցանել զնորա արեամբ ժողովուրդքս զնկալ, զոր ձեր կամաւ եւ յօժարութեամբ ինձ⁷ հաւատացէք, եւ որք զկնի իմ գան եւ նուաւտացէք, եւ որք զկնի իմ գան եւ նուաւ շնորհի.⁸ եւ ոչ ամի ամի առնու զեօղ

1. = յետ.

2. Ա եւ ոչ

3. Բ զայր ? զայդ ?

4. Ա այս

5. Ա կամ յաղագս

6. Այս նախադասութիւնը աղծատուած է: Երկու օրինակն էլ ունին * յԱղուանից կաթողիկոսէ եւ զքերեւէ մերոյս — մինք կարդում ենք եւ զ (եւլ=իւլ) քերեւէ:

7. ԱՅ ինչ

8. Ա շնորհ

1. ԱՅ զիւադատին * Ա այս իմ

2. Ա ջուանշիրի

3. Բ պատճենի

4. ԱՅ եւս այլ=այլ եւս

5. Բ որդւոյ առ առ

6. ԱՅ քան

7. Ինձ թւում է, որ գաւառաբարձաւ հետքեր կան այս ձեռնարկների մէջ:

լուսաւորութեան, որպէս հրաման է սուրբ կանոնաց, և ոչ ծառայէ սրաի մտօք ամենայն մանրմութեամբ՝ ըստ արժանի սուրբ Լուսաւորչի աթոռոյն, և ի բնէն թափի, որ ի սուրբ Լուսաւորչի աթոռն է, բայց թէ հերձուած ինչ երևի, զոր կանոնք [Բ] և զիրք վկայեն, և յաղագս աւագաց աշտանօք, կամ երեսաց մեծութեան կամ զինչ, և [է] մարմնաւոր զօշութեան և թիկունս պարձուցանէ ի ճշմարիտ առաջնորդէ, և հակառակին հնազանդի՝ նդովեալ եղիցի ի կեանս և ի մահ: Եւ բաժինն ընդ Յուդայի աստուածապաճառի և Գէեզայ բորտի և Սիմոնի կախարդի և Հրէից աստուածապանիցն եղիցի: Եւ եկեացեն ի վերայ նորա անէծք ցաւազինք, զոր հաստատեցին սուրբ հարքն Հայք և Աղուանք յաւուրս տեառն Եղիայի Հայոց կաթողիկոսի, յաղագս ապառաժութեան ի սուրբ Լուսաւորչի աթոռոյն: Եկեացէ ի վերայ նորա անէծք սուրբ հայրապետացն՝ տեառն Յովննիսի և տեառն Թէոդորոսի և տեառն Անանիայի և այլ սուրբ եպիսկոպոսաց, զոր կարգեցին ի վերայ Յակովբայ, որ յառաջն էր քան զիս և ապառաժեաց ի հայրական զբրկաց սուրբ աթոռոյն և մերժեցաւ յօրհնութենէ՝ սրբոյ և լուծեալ եղիցի ի սուրբ և յաստուածատուր կարգաց և ի սուրբ Հոգւոյն որոշեալ եղիցի:

Եւ թէ,² ոք յիշխանաց կամ յազատաց կամ ի մերձաւորաց, [Ա] եղբարց և յաղգանաց, կամ յօտարաց՝ օգնէ, կամ եպիսկոպոս համարի և կամ քահանայ, կամ սարկաւազ, կամ յուխտ, եկեղեցւոյ՝ աստուած նմա մի՛ ողորմեցի մի՛ կենօք, մի՛ մահու, և բաժինն ընդ անհաւատիցն եղիցի:

Իրեցաւ ի կաթողիկոսութեանն և ի հայրապետութեանն աստուածապատիւ և հոգեւոր—տեառն Անանիայի և ի թաղաւորութեանն Աշտի որդւոյ՝ Արասայ,

և որ էր ի Սիւնիս իշխանաց իշխան տէր Վասակ, և որ ի Բաղս իշխանաց իշխան [Բ 129b] տէր Զուանշիր, և որ եպիսկոպոսունք ի տեղիս՝ էին՝ տէր Դաւիթ Խոսիսոսունեաց եպիսկոպոս և տէր Սահակ Գնդունեաց եպիսկոպոս, և Հայոց թուականն էր 457:

Ըստ նմին օրինակի և յիշխանացն առեալ ձեռնարկ՝ մի՛ ևս այլ լինել նմա թիկնածու յազատամբութեան ժամանակս՝ թէ լինիցի արդեօք, որ ունէր օրինակ դայս:

*** * ՅՐԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԹՅՈՅ** այս իմ ձեռագիր է՝ Զուանշիրի² Չագիկ իշխանի որդւոյ՝ առ աստուածապատիւ և հոգեւոր տէր Անանիա՝ Հայոց կաթողիկոս. հաւանեալ եւ աստուծոյ միջնորդութեամբ և սուրբ Եշանիս. Որովհետեւ մարդասիրութիւնն աստուծոյ քաղցրացոյց դաստուածապատիւ և զհոգեւոր—տէր Անանիա Հայոց կաթողիկոսի կամօք՝ ի յիւրեանց ծառայիս և այլ ծառայիցս, և յիւրեանց ի վիճակիս և ժողովրդեանս և այսպէս բարի կամով քաղցրացան՝ ծառայեմք զսուրբ աթոռս ուղորդ մտօք և անխարդախ սրտիւ որպէս զաստուած: Եւ ոյք լինին մեր վերջականք՝ զսուրբ Լուսաւորչի աթոռոյն զծառայութիւնն ուղիղ ունիմք: Եւ որ զինի ձեր յաջորդին ի սուրբ աթոռք՝ աղերսեմք՝ որպէս նորա կարգին տուիչ են և այլ ամենայն մեծարանաց ի մեր հնազանդութեանն ի վերայ և ի ծառայութեանն՝ զառաջին սուրբ հայրապետացն զտուեալ պատիւն ոչ որոշել⁶ ի մեր առաջնորդէն:

Իսկ ի թէ ոք յեպիսկոպոսաց մերոյ որ զինի մեր զարմից քան և՛ առանց հերձուածոյ և կամ այլ յայլ[տ]ի պատճառի⁷ որ կանոնք* և զիրք վկայեն՝ ապրատամբեն ի սուրբ Լուսաւորչին, որ

1. Բ ի տեղս * Ա կանոն

2. Բ Զուանշիրի

3. Բ որդոյ

4. Բ անանիայ

5. Ա Կեղեցի ի կամօք Բ կաթողիս ի ի կամօք

6. Ա Բ որոշեալ

7. Ա Բ այլ յայն ի պճոք = այլ յայլ[տ]ի կամ այն[պիսի] պատճառի.

1. Ա օրհնութենէ

2. Ա օթէ

3. Բ որդոյ

պէս [Բ] Եսկորն արար և խրամատեաց
դասնն Սիսական զկարգադրութիւն [Ա
206a] և նա եղև կարապետ և սկիզբն
ապստամբութեան, որ այլ բնաւ չէր լեալ
ի տանն Սիւնեաց մինչև ցԵսկոր: ¹ ու
րում թիկնածու եղեալ ² և մեղաք աս-
տուծոյ և իւր փոխանիդ:

Արդ՝ թէ այլ ոք ընտրի ի մեր յառու-
րս կամ՝ զկնի որդւոց ³ մերոց, ի հոք ⁴ ի
մեր զարմից, յիշխանաց կամ ի անբանց
կամ յազատաց նմա օգնական լինի՝ դա-
րան թաքստեան՝ և ոչ տայ ⁵ ի ձեռս
Հայրապետին, որ արդարութեամբ դա-
տի ըստ կանոնաց, աստուած նմա մի՝
ողորմեսցի մի՝ աստ և մի՝ ի Զրիստոսի
ահեղ տառնին, և մասն և բաժին ընդ
սատանայի եղիցի և ընդ Եուդայի աս-
տուածապաճառի և ընդ Սիմոնի կախար-
դի և նզովեալ եղիցի յամենասուրբ Եր-
րորդութենէն և յամենայն սրբոց, և
զարիւն ամենայն սրբոց աստուած ի նմա-
նէ պահանջեացէ, որ ապստամբ եպիսկո-
պոսին օգնական լինի յանիրաւութեան
վերայ:

Գրեցաւ ձեռնագիրս այս ՆՆՆ
Թուականին ձեռամբ Զուանչիլի՝ որդի
Զողիկայ՝ Բաղայ իշխանի և տուաւ ձեզ
աստուածապաճառ և հոգեոր—տէր Անա-
նիա ⁶ Հայոց կաթողիկոս թէ աստուած
կամի:

* * * ՅԱՆՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ այս ձեռա-
գիրս ⁷ է իմ՝ Ղասակայ Սիւնեաց իշխա-
նաց իշխանի, որդի Սմբատայ ⁸ իշխանաց
իշխանի, ձեզ աստուածապաճառ և հո-
գեոր—տէր Անանիա Հայոց կաթողիկոս
թէ այս օրէս ⁹ յառաջ, որ Հայ Թուականս
ՆՆՆ էր յորժամ զուք սուրբ Նշանովդ
ի մեզ խոնարհեցայք և եկիք և զմեր զյան-

ցանն անտես արարիք, որ վասն ա-
պրստամբութեանն ի սուրբ Ղուսաւորչի
աթոռոյն և յԱղուանս [Բ 130a] դառ-
նայոյ և անտի զթերակատար և զանկա-
նոնական իւղն օտար երեւ ի մեր տունս
և ի սուրբ Ղուսաւորչին սեփական ¹ վի-
ճակս, և մեք նմա լսելով և ներելով՝
մեզս գործեցաք և մեղաք աստուծոյ և
աստուծոյ փոխանիդ: Զի զարան եղաք
նմա և ոչ տուաք ի ձեռս, որ ըստ աս-
տուծոյ հրամանին և սուրբ կանոնացն
խրատեալ էիք զձեր ծառայն, որպէս
յաստուծոյ հրաման ունիք՝ արդարա-
ջուցանել զարդարն և դատել զանիրաւն,
որք արտաքոյ աստուծոյ հրամանին գոր-
ծեն, որպէս արար Եսկոր և յաստուծոյ
դատապարտեցաւ և զմեզ իւր կորչա-
տեանն հաղորդ [Ա] արար և ընդ անի-
ծիւք փակեաց զՍիսական տունս՝ երկո-
տասն զաւառաւ: ²

Արդ՝ եթէ ի մեր տանս այլ ոք յեպիս-
կոպոսաց՝ եթէ ի մեր յառուրս և թէ յայ-
լոց, որ զհետ մեր լինին ի դարս դարս
և այլ այդպիսի չար ³ ընտրի, որպէս Ես-
կոր ընտրեցաւ և հոք ⁴ նմա ներեալ [ց]
յիշխանաց կամ ի անբանց և ոչ տայ ⁵
ի ձեռս Հայրապետին, որ ի Ժամանակին
որ ի սուրբ Գրիգորոյ յաթոռն նստի-
կամ ածել յուղղութիւն և կամ բառ-
նալ ի միջոյ՝ նզովեալ լիցի յամենասուրբ
Երրորդութենէն և բաժին [ն] ընդ աս-
տուածապանիցն եղիցի, և պարտական
եղիցի հայհոյութեան սուրբ Հոգւոյն՝ որ
առանց թողութեան է, և Զնջեացէ աս-
տուած զայնպիսին ի դպրութենէն կե-
նաց: Եւ եթէ մարտիրոսական արիւն
հեղուցու՝ աստուած ընդ Եուդայի խեղ-
զամահութեանն չափոյն ընկողցի, որ ա-
պրստամբ եպիսկոպոսին օգնական լիցի
[ի] տանս Սիսականի, ով ոք և իցէ
եղիցի, եղիցի:

1. Ա յակոր
2. Ա եղաք
3. Բ որդոց
4. Ա արայէս ի հոքս
5. Բ տա
6. Ա աննի
7. Բ ձեռագիր
8. Բ սմբատա
9. Ա օրէ

1. Ա Բ սեփական
2. Ա զաւառ
3. Ա Բ այդպիսի ի չար
4. Ա Բ տա
- * Տես վերեւի ասացուածը ի հոք ի մեր զարմից:

Չայս ձեռագիր պատճենն¹ ընկալաք ի նո-
յանէ կանոնական հաստատութեամբ վասն [Բ]
առ յապա ժամանակաց, զի մի՛ լիցին կցորդ
ապստամբացն կորստեանն,² այլ հնազանդելոցն
օրհնութեանց արժանաւորք կղիցին:

Եւ մեք գէմ եղեալ՝ գնալ հասանել ձե-
պեաք յաշխարհն Աղուանից, շինել զտեղի հա-
կառակնամուտն Գաղկայ, և ուրք յառաջ քան
զհա:

Իսկ ապա զուժեան հասանէր ի մեծ իշ-
խանէն Սենեքերիմայ³ զալ հասանել իսմայի-
լականաց բռնութեամբ յաշխարհ նորա գե-
րել և աւերել⁴ և ի սուր սուսերի մաշել: Եւ
զիրա աղէտիցն առաքէ ծանուցանել մեզ՝ մի՛
ևս մտանել առ անգամ մի յամպրոպ դառ-
նութեան:

Իսկ մեր ապա գնացեալ եկաք յաշխարհն
մեր՝ առ թագաւորն բարեպաշտ Աշոտ Հայոց
Մեծաց, որոյ տեսեալ զմեզ ուրախ եղև յու-
րախումբին մեծ: Մանաւանդ պատմեալ⁵ մեր
զշինութիւն հոգեւոր գործոյն՝ բերկրեալ փա-
ռաւորէր զաստուած: Եւ ըստ յաջողելոցն
աստուծոյ՝ ի շնորհաց հղօրիս այսորիկ և ա-
ղօթից սրբոց՝ ոչ կամելով առնել⁶ անտես
զաշխատութիւնս մեր, ծագեաց⁷ ի սիրտս
հղօրացն Աղուանից, ի թագաւորն,⁸ որ կոչէր
իշխանակ՝ որդի տեառն Ատրնբրսեհի, և Սե-
նեքերիմայ Աղուանից իշխանաց իշխանի, և
նորին [Ա 207a] ամուսնոյ, և քեռ նորին,
և տեառն Սենեքերիմայ՝ որդոյ Գրիգորի Խա-
չեան իշխանի, և տեառն Վաչագանայ Գո-
րոզուաց իշխանի, և տեառն Գուրգենայ
Արեւելեաց իշխանի, և այլ բազում մեծա-
մեծաց միանգամայն և աշխատորոյժ ամբո-
խից: Եւ միարանեալ ի հոգւոյն շնորհայ՝
ի նոյն ամի, ի նմին ամսեանն [Բ 130b]
երկրորդի առաջնոյ և բնարեալ զայր մի հո-
գեւոր և առաքելաջան և ծերական ալօք
պատուեալ՝ Դաւիթ անուն՝ Խոտակերից⁹ վա-
նական, և առաքեն ի Շիրակ գաւառ, ի նստո-
ցին¹⁰ լեալ տեառն Սմբատայ Հայոց թագաւո-

րի, Շիրակափան կոչեցեալ: Եւ լուեալ զառ-
նե(ա)լն աստուծոյ՝ ամենայն աստուածաւոր
հոգի փառաւոր առնէր զէից ստեղծիւն¹ աս-
տուած:

Եւ յուեալ թագաւորն² Հայոց Աշոտ և
նորին եղբարց Մուշեղայ և Ատրնբրսեհի՝ ու-
րախ եղեն յոյժ և մեծապարգև շքեղու-
թեամբ տային ձեռնադրել զնա մերում նուա-
տութեանս³ կաթողիկոս Աղուանից նահանգին:

Եւ մեծամեծ աղերսիւք և առատաձեռն
տուչութեամբ և մեծապատիւ փառօք տայաք
նմա նշան սկսեղէն յոյժ ծանրագին, բնեղ-
լուղեալ մարդարտօլք և զարդարեալ ակամբ
պատուականօք: Եւ առաքեալք խաղաղու-
թեամբ յաշխարհ իւր՝ մեծապարգև աւետեաց
հնչումն տալով խաթութեղելոցն յաստուածա-
յին գրկացն հոգեծին Լուսաւորչին: Եւ ա-
ւարտեալ հաստատեցաւ ջան փաստակոյ մե-
րում և աշխատութիւն բազմամեայ⁴ տառա-
պանացն, ի շրջանիս Հայոց, ի ՇԷ՛, կամօքն
աստուծոյ և աղօթիւք սրբոցն: Եւ հանգեալ
իղձք տարփանաց տառապեալ և ներգե⁵ հըն-
չոյ մերում:

Եւ արդ՝ շնորհ ունիմ ես այնմ որ զօ-
րացոյցն զիս՝ տեառն իմոյ Յիսուի Զրիստոսի
և պարծիմ յուսով փառացն աստուծոյ, և
աղաչեմ զձեզ⁶ ո՛վ սրբանեալ և հոգիա[Բ]-
փարթամ ներանձնաւոր տեալք և եղբարք⁷
իմ որք յաջորդիք յաթոռ սրբոյ Լուսաւորչիս
մի՛ ես այպանել զաշխատութեամբ իմով այլ
զունակ Փրկչին հօրն ձերոյ ի զոհութիւն
ընկալեալ զերկուս խէրեւշտ այրոյն՝ և զուր
ընկալջիք զիմս⁸ աշխատութիւն, և ի ձերոյ
յոգնաջան աղօթից նպաստ շնորհի [Ա] շնորհի
հիքոյս և ձրել չափովք ձրողին ձեզ զանչա-
փելի փարթամութիւնն, և կեալ ի մշտնջնա-
ւոր յապաղային⁹ հանդիմեալ աւուրն:

Վասն զի աստուծոյ հօր և Յիսուսի
Զրիստոսի և Հոգւոյն սրբոյ փառք, այժմ¹⁰
և յաւիտեանս յաւիտենից, ամէն:



1. Բ պատճենի 2. ԱԲ կորցան 3. Բ սենեքերիմայ
4. ԱԲ աւերել 5. Ա պտմել Բ պտմել
6. Ա չունի առնել 7. ԱԲ մեր: Ժագեաց
8. Ա չունի Ժ թագաւորն Բ ի թգրն
9. Ա խոտակերից
10. Այս բառի մասին տես իմ յօդուածը՝ ԵՍՏՏՏ.

1. Ա ստեղծին 2. Բ թգրն 3. Ա նուապես
4. Բ բազմամեայ 5. Բ ներքեւ 6. Ա չունի զձեզ
7. Բ եղբարք 8. Ա զիմ 9. Ա յապաղային 10. Ա այժմ